



ԱՆՁԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՏԱՐՀԱՆՄԱՆ ԵՎ ՊԱՏՄՊԱՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2023.1-86

Հիմնաբառեր. *տարիանում, պատասխանում, անհատական պաշտպանություն, գոյատևման պայուսակ, առաջին օգնության պայուսակ, արտակարգ իրավիճակ, ստուգաթերթիկ*


Վահե ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

1994 թ. ավարտել է ԵՐԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ): 1994-1997 թթ. սովորել է ԵՐԺՏԻ ասպիրանտուրայում՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ:

1998 թ. առ այսօր զբաղվում է գիտամանկավարժական գործունեությամբ տնտեսագիտության տեսության ամբիոնում. սկզբում՝ որպես ասիստենտ, այնուհետև՝ որպես դոցենտ: 2018 թ. մինչ օրս ՀՊՏՀ «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի ավագ հեղափոխող է:

Հեղինակ է շուրջ 50 գիտական աշխատանքների:

 <https://orcid.org/0000-0002-0609-2837>

Արտակարգ իրավիճակներում և ռազմական գործողությունների ժամանակ առանձնակի կարևորություն է ստանում մարդկանց պատրաստվածությունը: Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հարցերի վերաբերյալ բնակչության ուսուցումը, որպես կանոն, իրականացվում է խաղաղ, բնականոն պայմաններում: Սակայն, միշտ էլ անհրաժեշտ են որոշակի կիրառական գործիքներ, որոնք թույլ կտան մարդկանց արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվել՝ հենվելով չափազանց անհրաժեշտ, հակիրճ տեղեկությունների վրա: Հոդվածի հեղինակներն այս առումով առաջարկում են օգտագործել իրենց մշակած «Անձի պատրաստվածության գնահատման ստուգաթերթիկը», որը հստակ քայլեր է մատնանշում արտակարգ իրավիճակներում՝ բնակչության պաշտպանության ձևերի տեսանկյունից: Նրանք խորհուրդ են տալիս ընթերցողին լրացնել մշակված հավելվածը և դառնալ ավելի պատրաստված՝ ոչ միայն սեփական անձը, այլև շրջապատի մարդկանց պաշտպանելու նկատառումով:

Արտակարգ իրավիճակներում (ԱԻ) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության (ՔՊ) ձևերն առհասարակ երեքն են՝ տարիանում, պատասխանում և անհատական պաշտպանություն¹:

¹ Տես ՀՀ օրենքը «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», ընդունված 1998 թ. դեկտեմբերի 2-ին, հոդված 7, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=30320> և ՀՀ օրենքը «Քաղաքացիական պաշտպանության մասին», ընդունված 05.04.2002, հոդված 5, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=51923>

Թե՛ անհատական, թե՛ կոլեկտիվ պաշտպանության (տարհանում, պատսպարում) միջոցառումների կազմակերպման և իրականացման շրջանակում ոչ միայն ՀՀ պետական կառավարման և ինքնակառավարման ու լիազոր մարմիններն ունեն պարտավորություններ, այլև քաղաքացիները: Նրանք իրենց պատրաստվածությամբ և անվտանգության մշակույթի ձևավորման կարողություններով կարող են ազդել ինչպես աղետների ռիսկերի կառավարման արդյունավետության մակարդակի բարձրացման, այնպես էլ արտակարգ իրավիճակների զարգացման ընթացքի վրա: Պարզաբանման նպատակով նշենք, որ Հայաստանում թե՛ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և թե՛ ռազմական գործողությունների ու պատերազմների դեպքում քաղաքացիական պաշտպանության հարցերով լիազոր մարմինը մինչև վերջերս ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն էր, այսօր արդեն՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը, որի կազմում գործելու է փրկարար ծառայությունը՝ համապատասխան ստորաբաժանումներով:

ՀՀ քաղաքացիները ԱԻ-ում բնակչության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում ունեն որոշակի իրավունքներ և պարտավորություններ, որոնք սահմանվում են համապատասխան օրենքներով: Մասնավորապես՝ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում նշվում է. «Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մասնակցել արտակարգ իրավիճակների հետևանքներից բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»²: Իսկ «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածում ասվում է. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իրավունք ունեն»³

- ա) ստանալ ճշգրիտ տեղեկություն իրենց պաշտպանվածության աստիճանի մասին,
- բ) ստանալ ՔՊ միջոցառումների իրականացման հետևանքով կրած վնասների փոխհատուցում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը մասնակցել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով⁴:

² Տես ՀՀ օրենքը «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», ընդունված 1998 թ. դեկտեմբերի 2-ին, հոդված 18, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=30320>

³ ՀՀ օրենքը «Քաղաքացիական պաշտպանության մասին», ընդունված 05.04.2002 թ., հոդված 16, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=51923>

⁴ Տես նույն տեղում:




Անի ՏԵՐՏԵՐՅԱՆ

Դասախոս

2012 թ. գերազանցությամբ ավարտել է Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի (ՃԿՊԱ) մագիստրատուրան: 2019 թ.-ից ՀՊՏՀ կառավարման ամբիոնի հայցորդ է, միաժամանակ, ՌԴ ԱԻՆ-ի Քաղաքացիական պաշտպանության ակադեմիայի «Լրացուցիչ մասնագիտական կրթության» դիպլոմավորված մասնագետ, ինչպես նաև Կենսագործունեության անվտանգության և բնապահպանության միջազգային ակադեմիայի մագիստրոս անդամ:

Հեղինակ է 9 գիտական հոդվածների:

 <https://orcid.org/0000-0002-5628-3199>

Այսպիսով՝ պետք է արձանագրել, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի որոշակի անելիք ունի՝ կապված սեփական անձի և միջավայրի անվտանգության ապահովման հետ: Անդրադառնալով մեր իրականությանը՝ կարող ենք վկայել, որ թե՛ 44-օրյա պատերազմի, թե՛ COVID-19 համավարակի փորձը, թե՛ ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակը ցույց են տալիս, որ մեր բնակչությունը ոչ միշտ է պատրաստ դիմակայելու արտակարգ իրավիճակներին և ոչ միշտ է կարողանում լիարժեքորեն իրականացնել պաշտպանական միջոցառումների այն մասնաբաժինը, որը պատվիրակված է իրեն: Օրինակ՝ ռազմական գործողությունների ժամանակ շատերը նույնիսկ չգիտեն, որ անհրաժեշտ է պատսպարվել, չգիտեն՝ որտեղ պատսպարվել կամ հարկ եղած դեպքում՝ կացարանը լքել որոշակի ժամանակահատվածում, ինչ իրեր, գոյատևման ռեսուրսներ վերցնել, քանի որ վա հաշվարկով, որտեղ և ում է դիմել, եթե կա տեղեկությունների պակաս և այլն:

Իհարկե, նշենք, որ ՀՀ բնակչությունը սահմանված կարգով ուսուցանվում է ԱԻ և ՔՊ ոլորտի հարցերով⁵, սակայն, կարծում ենք, որ անվտանգության գիտակցման և ռիսկերի կառավարման տեսանկյունից, բոլորս էլ ունենք ինքնակրթության և փոխօգնության կարիք:

Մասնագիտական փորձը վկայում է, որ հաճախ, ի լրումն ուսուցման այլ բաղադրիչների, մարդկանց կարող են օգնել սեփական կարողությունները գնահատող գործիքակազմերը, որոնք թույլ են տալիս հասկանալ, թե որքանով են իրենք պատրաստ դիմակայելու այս կամ այն արտակարգ իրավիճակին: Սովորաբար, հստակ հրահանգներ պարունակող կամ որոշակի քայլեր մատնանշող տեղեկություններն ավելի ընկալելի են, քան բազմաբնույթ տեղեկատվական վերլուծությունն ու դրա տեղայնացումը:

Մենք մշակել ենք «Արտակարգ իրա-

վիճակների պատրաստվածության գնահատման ստուգաթեթիկ», որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր անձի գնահատելու իր և իր ընտանիքի փաստացի պատրաստվածության աստիճանը տարհանման և պատսպարման նախապատրաստման փուլում:

Ստորև ներկայացնում ենք, թե ինչպես պետք է կիրառել այս ստուգաթեթիկը՝ որպես ռիսկերի կառավարման գործիք «անձ-ընտանիք» մակարդակում:

Անձի պատրաստվածության ստուգաթեթիկը բաղկացած է հետևյալ բաժիններից (հավելված 1)⁶.

1. պատրաստվածության գնահատում,
2. տարահանման նախապատրաստում,
3. պատսպարման նախապատրաստում,
4. առաջին օգնության պայուսակի պարունակության ցանկ,
5. գոյատևման պայուսակի պարունակության ցանկ,
6. անհատական տեղեկատվական թերթիկ:

Պատրաստվածության գնահատում: Այս բաժինը ներառում է 10 գործողություն, որ պետք է իրականացնել՝ մինչև արտակարգ իրավիճակի առաջացումը: Յուրաքանչյուր գործողության դիմաց անձը պետք է նշի «այո» պատասխանը, եթե ինքը կամ իր ընտանիքի անդամները դա կատարում են, կամ «ոչ» պատասխանը, եթե չեն կատարում: Արդյունքում, 6-ից ավելի «այո» պատասխանի դեպքում անձի պատրաստվածությունը գնահատվում է դրական (70% և ավելի), մինչդեռ հակառակ պարագայում՝ բացասական, և նախքան մյուս բաժիններին անցնելը, նա պետք է իրականացնի այդ գործողությունները:

Տարահանման նախապատրաստում: Նշված են այն 4 հիմնական գործողությունները, որոնք մարդը պետք է կատարի խաղաղ պայմաններում, երբ չկա արտակարգ իրավիճակ: Այս մատնանշված են շինությունը լքելու՝ օբյեկտային մակարդակում տարհանում իրակա-

⁵ Տե՛ս ՀՀ կառավարության 2015 թ. հունվարի 22-ի՝ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N46-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=95492>

⁶ Տե՛ս հավելված 1 (մշակել են հոդվածի հեղինակները):

նացնելու 6 ուսուցողական քայլեր:

Պատասպարման նախապատրաստում: Հաջորդիվ ներկայացված են պատասպարման նախապատրաստման 3 հիմնական գործողություններ, ապա ևս 6 կարևոր քայլեր այդ ուղղությամբ:

Առաջին օգնության պայուսակի պարունակության ցանկ: Առաջին օգնության պայուսակն անհրաժեշտ գործոն է ամեն մի արտակարգ իրավիճակում: Առաջին օգնության մասին գիտելիքի ու պայուսակի առկայությունն էապես նվազեցնում են տուժածի կյանքի նկատմամբ սպառնալիքը, նպաստում հետագա բժշկական միջամտության արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Առաջին օգնության պայուսակ պետք է ունենան բոլորը՝ թե՛ տանը, թե՛ ավտոմեքենայում և թե՛ աշխատավայրում: Առաջարկվող ցանկը մասնագետները մշակել են՝ հաշվի առնելով միջազգային և տեղական լավագույն փորձը:

Գոյատևման պայուսակ: Այս պայուսակն անհրաժեշտ է մարդուն և իր ընտանիքին՝ ամեն մի արտակարգ իրավիճակում 72 ժամ գոյատևելու համար: Այն կարող է

ներառել ինչպես գոյատևման հատուկ պաշարներ, այնպես էլ ձեռքի տակ եղած ամենօրյա պարագաներ, որոնք կարող են օգնել ողջ մնալ տարբեր պայմաններում՝ փլատակների տակ, անտառում մոլորվելիս կամ այլ ոչ բնականոն պայմաններում: Ստուգաթերթիկում ներառված է գոյատևման պայուսակի պարզագույն ցանկը, որը կարող է հասանելի լինել բոլորին:

Անհատական տեղեկատվական թերթիկ: Անձի պատրաստվածության գնահատման ստուգաթերթիկն ամփոփիչ և ամենակարևոր բաժինն է: Այն հաղորդում է հակիրճ, առաջնային կարևորության տեղեկություններ անձի պաշտպանվածության մասին, ինչպես նաև ներառում անձնական տվյալներ՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան թիվ, բնակության և աշխատանքի վայրեր, առողջական վիճակ, ընտանիքի անդամների թիվ և այլն: Հըստակ նշվում են անձի տարիանման և պատասպարման վայրերի մասին տվյալները: Այս բաժինն անվտանգության ինքնատիպ անձնագրի նախատիպ է, որը մշտապես պետք է ունենալ ձեռքի տակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 02. 12. 1998, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=30320>
2. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 05.04.2002, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=51923>
3. ՀՀ կառավարության 2015 թ. հունվարի 22-ի՝ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N134-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N46-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=95492>
4. ՀՀ կառավարության 2011 թ. օգոստոսի 18-ի՝ «Վտանգավոր տարածքներից բնակչության տարհանման կարգը հաստատելու մասին» N1180-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=70532>
5. ՀՀ կառավարության 2000 թ. հոկտեմբերի 25-ի՝ «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» N679 որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=8121>
6. ՀՀ կառավարության 2000 թ. սեպտեմբերի 28-ի՝ «Բնակչության պատասպարման կարգը հաստատելու մասին» N592-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=8064>

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Արտակարգ իրավիճակներում անձի պատրաստվածության ստուգաթերթիկ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ ՈՒՄ ԱՆՁԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ

Բաժին 1. ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

N	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՆԿԱՐԱԳԻՐ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
1.	Ընտանիքի անդամների հետ մշակվել է գործողությունների պլան:	Գիտե՞ք, թե հավանական վտանգների (երկրաշարժ, հրդեհ, պատերազմ և այլն) դեպքում ինչ եք անելու:	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
2.	Հայտնաբերված և վերացված են շինության (տան, աշխատավայրի) վտանգները:	Կահույքն ամրացված է հատակին և պատերին, պահարանների վերին դարակաշարերն ազատված են ծանր առարկաներից, մեկուսացված են վտանգավոր նյութերը, ստուգված են ջրամատակարարման, էլեմուցման, գազամատակարարման համակարգերը:	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
3.	Որոշված են շինության վտանգավոր վայրերը՝ զգուշանալու համար:	Գիտե՞ք, թե որ պատերն են անկայուն, որտեղ է առկա/հնարավոր ճաքերի, փլուզումների առաջացման վտանգ ցնցումների ժամանակ:	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
4.	Որոշված են շինության անվտանգ վայրերը՝ պաշտպանվելու համար:	Գիտե՞ք, թե որոնք են հիմնական պատերը, սյունախորշերը, որտեղ կարելի է պատսպարվել երկրաշարժի ժամանակ:	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
5.	Հավաքված է գոյատևման պայուսակը:	Ըստ համապատասխան ցանկի՝ ներառված են բոլոր պարագաները (ցանկը՝ հաջորդիվ):	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
6.	Հավաքված է առաջին օգնության պայուսակը:	Ըստ համապատասխան ցանկի՝ ներառված են բոլոր պարագաները (ցանկը՝ հաջորդիվ):	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
7.	Որոշված է ընտանիքի անդամների հետ հանդիպման վայրը (տնից դուրս գտնվող):	Որոշված վայրը գտնվում է տան մոտ, սակայն հեռու է այլ շենքերի փլուզման հնարավոր շատավիղց և էլեկտրական լարերից:	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
8.	Մշակվել է անհատական տեղեկատվական թերթիկ Ձեր և Ձեր ընտանիքի անդամների համար:	Թերթիկում նշված են Ձեր և Ձեր ընտանիքի անդամների մասին հիմնական տեղեկությունները՝ անուն, ազգանուն, հայրանուն, տարիք, հասցե, հեռախոսահամար, հիվանդություններ, ընդունվող դեղեր, այդան կարգ, հաշմանդամության կարգ և այլն (տե՛ս հաջորդիվ):	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
9.	Նկուղային (կիսանկուղային) հարկը պատրաստ է պատսպարման համար:	Պատսպարվելու նպատակով կահավորվել և մաքրվել է նկուղային (կիսանկուղային) կամ հարմարեցվել առաջին հարկը:	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
10.	Արագ արձագանքման ծառայությունների հեռախոսահամարների և գտնվելու վայրի մասին տեղեկություններ:	Մասնավորապես՝ ՀՀ ՆԳՆ, 911, շտապ օգնություն, գազի ծառայություն և այլն:	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ

Բաժին 2. ՏԱՐՀԱՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

<p>Պատրաստվել տարիանման՝ համապատասխան ազդանշան ստանալուց հետո:</p> <p>Աշխատավայրում և տանը տարածքը լքելու համար որոշել բոլոր երթուղիները, ճանապարհները, երթուղիները դարձնել անցանելի:</p> <p>Իմանալ, թե ուր գնալ, որոնք են աշխատավայրին և տանը մոտ գտնվող հավաքակայանները:</p> <p>Պատրաստ ունենալ գոյատևման համար համարված պայուսակ, չմոռանալ անձը հաստատող փաստաթղթերը:</p>	<p>Ուշադիր լսել տրվող հրահանգները, ճանաչել կիրառվող ազդանշանները:</p> <p>Հեռացնել բոլոր ծանր առարկաները ճանապարհից, բացազատված պահել բոլոր ելքերը:</p> <p>Այդ տեղեկությունները ճշտել աշխատանքի վայրի պատասխանատուներից (ղեկավար կազմ), իսկ արտակարգ իրավիճակի դեպքում ՀՀ ՆԳՆ մասնագետները Ձեզ կտեղեկացնեն Ձեր քնակության վայրի հավաքակայանի մասին:</p> <p>Դուրս գալուց առաջ հնարավորության դեպքում անջատել գազը, էլեմուցումը, ջրը, օգնել խոցելի մարդկանց, մեկուսացնել վտանգավոր նյութերը և այլն:</p>
--	--

ՏԱՐՀԱՆՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ (փակ տարածքը լքելու քայլեր)

- 1 Արտակարգ իրավիճակի դեպքում միացնել ազդանշանը
- 2 Վերցնել պայուսակը, եթե ձեռքի տակ է, դուրս գալ մոտակա ելքով
- 3 Զանգահարել 911
- 4 Օգտվել աստիճանախանդակից, չօգտվել վերելակից
- 5 Գնալ հավաքակայան (հավաքակետ)
- 6 Վերադառնալ միայն վտանգի վերացումից հետո

Բաժին 3. ՊԱՏՊԱՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒՄ

Պատրաստվել պատասխարման համապատասխան ազդանշան լսելուց հետո:	Ճանաչել և տարբերակել «Օղային տազնապ» ազդանշանը:
Իմանալ պատասխարման հնարավոր վայրերը՝ աշխատավայրում, տանը, դրսում:	Ճշտել այդ վայրերը՝ աշխատավայրից, իսկ տան դեպքում՝ համատիրությունից:
Պատրաստ ունենալ գոյատևման համար համարված պայուսակ:	Նախօրոք հավաքել պայուսակը, չմոռանալ անձը հաստատող փաստաթղթերը:

ՊԱՏՊԱՐՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ

- 1 Պատրաստվել ատսպարման՝ «Օղային տազնապ» ազդանշանի դեպքում:
- 2 Տնից դուրս գալիս անջատել գազը, էլ. սնուցումը, ջուրը, մեկուսացնել վտանգավոր նյութերը:
- 3 Օգնել այլ մարդկանց, եթե կա դրա անհրաժեշտությունը:
- 4 Վերցնել պայուսակը: Պաշտպանել գլուխը:
- 5 Պատասխարվել մոտակա թաքստոցում:
- 6 Թաքստոցից դուրս գալ միայն համապատասխան ազդանշանից հետո:

Բաժին 4. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՈՒՍԱԿԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Առաջին օգնության պայուսակ	Ախտահանող սփրեյ
Տետր, մատիտ	Պովլիդոն յոդ (քետոլինոլ)
Փաթոթային վիրակապ՝ ստերիլ	Լարան (ժգուտ)
Փաթոթային վիրակապ՝ ոչ ստերիլ	Մատի ամրակապ
Ստերիլ անձեռոցիկ	Ստերիլ ձեռնոց
Առաձգական վիրակապ	Դիմակ
Ցանցաձև վիրակապ	Անզիլիական քորոց
Եռանկյունաձև վիրակապ	Սառցապարկ, ջերմապարկ
Կպչուն ժապավեն	Ջերմակայուն ծածկոց
Կպչուն սպեղանիներ (տարբեր չափսի)	Մկրատ
Կպչուն սպեղանի՝ փոքր	Ունեղի
Ախտահանող անձեռոցիկ	Կաթոցիչ
Լապտեր	Բժշկական փայտիկ

Բաժին 5. ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՊԱՅՈՒՍԱԿԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1 Կարևոր փաստաթղթեր	Անձնական տեղեկատվական թերթիկ, անձնագիր, ծննդյան վկայական, ID քարտ, բանկային քարտ, սեփականության վկայական և այլն:
2 Անհատական պաշտպանության միջոցներ	Շնչադիմարի, մաշկի պաշտպանության միջոցներ՝ դիմակ, ստղավարտ, գլխարկ, գուլպա, ձեռնոցներ, անձրևանոց-թիկնոց և այլն:
3 Առաջին օգնության պարագաներ	Վիրակապակապ նյութեր, ախտահանող և այլ միջոցներ:
4 Դեղորայք, որ օգտագործում եք ԴՌՈՒՔ և Ձեր ընտանիքի անդամները	Այն դեղամիջոցները, որոնք ցուցված են թիշկների կողմից: Հիշե՛ք, որ դուք իրավունք չունեք տրամադրելու դեղորայք այլ անձանց:
5 Հիգիենայի պարագաներ	Մաքրող միջոցներ, ներքնաշոր և այլն:
6 Ջուր և սնունդ	Չոր, երկար պահպանվող, բարձր կարորիականությամբ, ջերմային մշակման կարիք չունեցող սնունդ: Ջուր, ինչպես նաև ջուրը մաքրող հաբեր:
7 Գոյատևման ռեսուրսներ	Արևային կայան, կողմնացույց, սպիչ, բազմաֆունկցիոնալ փոքրածավալ գործիքներ, պարան, ծածկոց, մարտկոց և այլն:

Բաժին 6. ԱՆՎՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵԹԻԿ

անուն, ազգանուն, հայրանուն

ծննդյան փվյալներ

բնակության վայր, հեռ. համար, աշխատանքի վայր, զբաղեցրած պաշտոն

արյան կարգ, առկա հիվանդություններ, նշանակված դեղորայք

այլ կարևոր փվյալներ

Ընտանիքի անդամների մասին տեղեկություններ

Անուն, ազգանուն

Հեռախոսահամար

Աշխատանքի վայր

Այլ տեղեկություններ

Պաշտպանական վաժժության մասին տեղեկություն

Տարիանման

հավաքակայան:

Ընտանիքի անդամների

հանդիպման վայր:

Պատասխարման

հիմնական վայր:

Ընդունման

հավաքակայան

Պատասխարման

լրացուցիչ վայր

Լրաց ուցիչ տեղեկություններ

Vare БУЛАНИКЯН

Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук, доцент

Ани ТЕРТЕРЯН

Соискатель кафедры управления, ассистент кафедры физического воспитания, по чрезвычайным ситуациям и гражданской обороны, АГЭУ

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

ОЦЕНКА ГОТОВНОСТИ ЧЕЛОВЕКА НА ПОДГОТОВИТЕЛЬНОМ ЭТАПЕ ЭВАКУАЦИИ И УКРЫТИЯ

В чрезвычайных ситуациях и при боевых действиях особое значение приобретает подготовленность людей. Обучение и подготовка населения к чрезвычайным ситуациям и вопросам гражданской обороны осуществляется заблаговременно, в мирных, штатных условиях. Однако людям всегда нужны практические, конкретные инструменты, которые позволят собрать очень нужную в экстренных ситуациях информацию в сжатой и практической форме. В связи с этим авторы статьи предлагают использовать разработанный ими «Контрольный лист оценки личной готовности», в котором указаны четкие этапы подготовки форм защиты населения в чрезвычайных ситуациях. Авторы советуют всем читателям заполнить разработанное приложение и использовать его для повышения защиты себя и окружающих.

Ключевые слова: *эвакуация, убежище, средства индивидуальной защиты, сумка для выживания, сумка для первой помощи, чрезвычайная ситуация, контрольный список*

Vahe BULANIKYAN*Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics, Associate Professor***Ani TERTERYAN***Applicant at the Chair of Management, Assistant at the Chair of Physical
Training, Emergency Situations and Civil Defense, ASUE*

SECURITY AND CHALLENGES

**ASSESSMENT OF HUMAN READINESS AT THE PREPARATORY STAGE
OF EVACUATION AND SHELTER**

In emergency situations and during military operations, the preparedness of people is of particular importance. Education and preparation of the population for emergency situations and civil defense issues is carried out in advance in peaceful and regular conditions.

However, people always need practical, concrete tools that will allow them to collect necessary information in emergency situations in a concise and practical form. In this regard, the authors of the present paper propose the use of the “Personal Readiness Assessment Checklist” they have developed, which indicates clear stages in the preparation of forms for protecting the population in emergency situations. The authors advise all readers to complete the application and use it to increase their own and others’ protection.

Keywords: *evacuation, shelter, personal protective equipment, survival bag, first aid bag, emergency, checklist*